

«Հաստատում եմ»  
Հարավկովկասյան երկաթուղիներ ՓԲԸ  
Գլխավոր տնօրեն

\_\_\_\_\_ Ա.Վ.Մելնիկով

«\_\_\_» \_\_\_\_\_ 2022 թ.

### Ծանուցում

**Երկաթաբեռոնե կոճերի մատակարարման պայմանագրի կնքման իրավունքի մասին  
Գնանշման հարցում**

**№ ՀԿԵ-ԳՀ 022/102 ծածկագրով**

կ/կ	Գնման գործընթացի չափանիշներ	Գնման պայմաններ
1.	<b>Գնման տարբերակ</b>	<b>Գնանշման հարցում թղթային տարբերակով</b>
2.	Գնման գործընթացի կազմակերպողի անվանումը, գտնվելու վայրը, հասցեն, էլեկտրոնային հասցեն, կոնտակտային հեռախոսահամար	Կազմակերպող՝ Գնումների կազմակերպման բաժին «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ Գտնվելու վայրը՝ ք.Երևան, Արցախի պող., 32 Փոստային հասցե՝ 0005, ք.Երևան, Արցախի պող., 32 Էլեկտրոնային փոստ՝ tender@railway.am Կոնտակտային հեռախոս՝ +374 (60) 46-31-74
3.	Գնման առարկան, մատակարարվող ապրանքի քանակը, կատարվող աշխատանքի, մատուցվող ծառայության ծավալը	Չափաբաժին 1 (նշանակման կայարան- Երևան) Շ-1 մակնիշի նախնական լարվածության երկաթբեռոնե կոճեր 1526 մմ ռելսամիջի լայնությունը երկաթգծերի համար՝ 4700 հատ ընդհանուր քանակով; Չափաբաժին 2 (նշանակման կայարան-Վանաձոր) Շ-1 մակնիշի նախնական լարվածության երկաթբեռոնե կոճեր 1526 մմ ռելսամիջի լայնությունը երկաթգծերի համար՝ 11 300 հատ ընդհանուր քանակով;
4.	Ապրանքի մատակարարման, կատարվող աշխատանքների, մատուցվող ծառայությունների վայրը և ժամկետները	<b>Մատակարարման վայրը՝</b> Հայաստանի Հանրապետության ռեզիդենտների համար՝ հաշվի առնելով դիսպետչերական կայանում երկաթուղային շարժակազմի մեջ բեռնումը, առանց նշանակման կայան տեղափոխման ծախսերի. Հայաստանի Հանրապետության ոչ ռեզիդենտների համար՝ հաշվի առնելով ՀՀ կիսավագոնների մեջ բեռնումը և տեղափոխումը «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի կայաններ: <b>Մատակարարման ժամկետ՝</b>

2023 թվականին երկաթբետոնե կոճերի մատակարարումը պետք է իրականացվի հետևյալ ժամանակացույցով.

	Ա վի ս	Մա րտ	Ապր իլ	Մայ իս	Հուն իս	Հուլ իս	Օգո ստո ս	Սեպտ եմբեր
Չափա բաժին №1 (նշան ակման կայար ան- երևան)	հ ա ս	700	700	700	700	700	700	500
Չափա բաժին №2 (նշան ակման կայար ան- Վանա ձոր)	հ ա ս	1000	2000	2000	2000	2000	2000	300

5. Պայմանագրի մեկնարկային (առավելագույն) գինը (չափաբաժնի գինը) կամ ապրանքի միավորի, աշխատանքի, ծառայության արժեքը

Պայմանագրի մեկնարկային (առավելագույն) գինը կազմում է, հաշվի առնելով բոլոր տեսակի հարկերը (այդ թվում՝ առանց ԱԱՀ-ի / ներառյալ ԱԱՀ-ն)

**Չափաբաժին 1** (նշանակման կայարան- Երևան) 4700 հատ - 108 805 000 (հարյուր ութ միլիոն ութ հարյուր հինգ հազար) ՀՀ դրամ առանց ԱԱՀ կամ 130 566 000 (հարյուր երեսուն միլիոն հինգ հարյուր վաթսունվեց հազար) ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ:

**Չափաբաժին 2** (նշանակման կայարան- անաձոր) 11 300 հատ- 261 595 000 (երկու հարյուր վաթսունմեկ միլիոն հինգ հարյուր իննսունհինգ հազար) ՀՀ դրամ առանց ԱԱՀ կամ 313 914 000 (երեք հարյուր տասներեք միլիոն ինը հարյուր տասնչորս հազար) ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ:

Հայաստանի Հանրապետության ռեզիդենտների համար՝ հաշվի առնելով դիսպետչերական կայանում երկաթուղային շարժակազմի մեջ բեռնումը, առանց նշանակման կայան տեղափոխման ծախսերի.

Հայաստանի Հանրապետության ոչ ռեզիդենտների համար՝ հաշվի առնելով ՀՀ կիսավազոնների մեջ բեռնումը և տեղափոխումը «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի կայաններ:

6.	Տեղեկատվություն հայտի ապահովման կիրառման չափի, կարգի և ժամանակի մասին (ներառվում է հաճախորդի / գործառնական հաճախորդի պահանջով «ՀԿԵ» ՓԲԸ )	Հայտի ապահովում չի տրամադրվում:
7.	Գնման փաստաթղթերի ներկայացման վայրը և կարգը	Փաստաթղթերը տեղադրվում են "ՀԿԵ" ՓԲԸ կայքում: Փաստաթղթերը հասանելի են "ՀԿԵ" ՓԲԸ կայքում առանց սահմանափակումների հրապարակման պահից:
8.	Գնմանը մասնակցելու հայտերի ներկայացման ժամկետի սկզբի կարգը, ամսաթիվը և ժամկետը:	Հայտերը ներկայացվում են երկու փակ ծրարներով՝ "Բնօրինակ" և "Պատճեն" հստակ մակնշմամբ: Հայտերի ներկայացման սկիզբ՝ ծանուցման հրապարակման պահից կայքում – 2022թ. –«11»-ը նոյեմբերի, ժամը 9:00- ից մինչև 18:00-ը Հայտերի ներկայացման վերջնաժամկետ՝ 2022թ. դեկտեմբերի «01»-ը, ժամը 9 :00-ից մինչև 18:00-ը Ծրարները՝ մինչև գնումների կազմակերպչին հանձնելը (Արցախի 32, ՆՏԱՏ, սենյակ 212 հասցեով) ենթակա են գրանցման "ՀԿԵ" ՓԲԸ անվտանգության ծառայության կողմից (Տիգրան Մեծի 86 հասցեում, Երևան կայարան):
9.	Տեղեկատվություն՝ մրցակցային գնումների փաստաթղթերում նշված պահանջներին չբավարարելու մասին	Պատվիրատուն կարող է մերժել գնանշումների հայտերը հետևյալ դեպքերում. 1) գնանշման հայտը չի համապատասխանում գնանշումների հարցման մեջ նշված պահանջներին; 2) պայմանագրի գնի (չափաբաժնի գնի) և/կամ ապրանքի, աշխատանքի, ծառայության միավորի գնի վերաբերյալ գնանշման հայտում առաջարկությունը գերազանցում է պայմանագրի սկզբնական (առավելագույն) գինը (չափաբաժնի գինը) և/կամ ապրանքի, աշխատանքի, ծառայության միավորի սկզբնական (առավելագույն) գինը (եթե այդպիսի գին սահմանված է); 3) հրաժարվում է գնանշումների հարցման անցկացումից; 4) մասնակցի կողմից գնանշման հայտի դրույթների վերաբերյալ պարզաբանումներ չներկայացնելը (պատվիրատուի պահանջի առկայության դեպքում):

10.	Գործընթացից հրաժարվելու իրավունքը	Կազմակերպողն իրավունք ունի հրաժարվել գնման գործընթացից ցանկացած պահին՝ մինչև հայտի դիտարկումը և մասնակցության իրավունքի տրամադրումը, որևէ պատասխանատվություն չկրելով ցանկացած ֆիզիկական և իրավաբանական անձանց առջև, որոնց նման գործողությունը կարող է վնաս պատճառել, ինչպես նաև փոփոխել գնման գործընթացի անցկացման վերաբերյալ ծանուցումը հայտերի ներկայացման վերջնաժամկետից 1 օր առաջ:
11.	Առաջարկությունների հարցման մասնակիցներին ներկայացվող պահանջներ և փաստաթղթերի ցանկ, որոնք պետք է ներկայացվեն իրենց համապատասխանությունը հավաստելու համար սահմանված պահանջներին	<p>1.Մասնակցի մոտ հարկերով, գանձումներով, տույժերով, հարկային սանկցիաներով ապառքների, ինչպես նաև բյուջետային համակարգի բոլոր մակարդակների բյուջեներում այլ պարտադիր վճարների և պետական արտաբյուջետային հիմնադրամներ պարտադիր վճարների (բացառությամբ այն գումարների, որոնց մասով տրամադրվել են տարկետումներ, տարածակետումներ, ներդրումային հարկային վարկ հարկերի և գանձումների մասին օրենսդրությանը համապատասխան, որոնք վերակառուցվել են օրենսդրությանը համապատասխան, որոնցով առկա է օրինական ուժի մեջ մտած դատարանի վճիռ այդ գումարների վճարման գծով հայտարարտուի պարտականությունը կատարված ճանաչելու մասին կամ որոնք ճանաչվել են որպես անհուսալի հարկերի և գանձումների մասին օրենսդրությանը համապատասխան գանձելու համար) գծով ժամկետանց պարտավորությունների բացակայությունը: Մասնակիցը համարվում է համապատասխանող սահմանված պահանջին այն դեպքում, եթե նրա կողմից սահմանված կարգով դիմում է տրվել նշված ապառքի, ժամկետանց պարտքի բողոքարկման մասին և այդ դիմումով որոշում մասնակցության հայտի քննարկման ամսաթվի դրությամբ մատակարարի (կապալառուի, կատարողի) որոշման մեջ չի ընդունվել,</p> <p>2.Մասնակցի՝ իրավաբանական անձի լուծարում չիրականացնելը և մասնակցին՝ իրավաբանական անձին կամ անհատ ձեռնարկատիրոջը անվճարունակ (սնանկ)</p>

		ճանաչելու և մրցութային վարույթ բացելու մասին դատարանի որոշման բացակայությունը:
12.	Ապրանքի, աշխատանքի, ծառայության վճարման ձևը, ժամկետները և կարգը	Վճարումն իրականացվում է անկանխիկ եղանակով՝ կոնտրագենտի հաշվին միջոցների փոխանցման միջոցով: Կանխավճար նախատեսված չէ: Վճարումն իրականացվում է ապրանքի առաքման եւ հանձնման-ընդունման ակտի ստորագրումից հետո 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում:
13.	Պայմանագրի կնքման ժամկետը	Գնման գործընթացի արդյունքներով կազմված մրցութային հանձնաժողովի ամփոփիչ արձանագրության ստորագրման օրվանից հաջորդող 10 օրվանից ոչ շուտ և 20 օր ոչ ուշ: